

Թեան ընթացքին մի կապ դառնել և ուղղել շատ բառերի և թուերի ազաւազումներ: *

Կարելի էր գուցէ մանրամասնութեանց մէջ պ. Մալխասեանի դիտողութեանց չհաւանել և այլ մեկնութիւններ տալ, բայց քննութեան այդ տեսակ բազմակողմանի և մանրակրկիտ ուսումնասիրութեան նկամամբ նշանակութիւն չունի այդ, և նորա փաստերը և եզրակացութիւնները հիմնաւոր են:


Ս. Կ.



* Օգտուելով այս առթից մեր կողմից աշխատեց ուղղել 2 աղաւաղուած յատուկ անուններ, որ ոչ մի ուրիշ տեղ չենք տեսնել:

Էջ 22. Եւ եղև ի նուագել... Արշակունեաց ի Հայաստան աշխարհի, ի քառնալ սերոքեանն Վասնշապուհ արքայի՝ փրէ ի վերայ սորա ազգն Կարսէ դովմայեցի ի իշխանութեանն...: Պարզ է որ այստեղ խօսքը Սասանեանց մասին է. ուստի մեկ այլ քառն աշխատեց եմ վերլուծում Պարս + եղովմայեցի: Եղովմայեցի քառն պէտք է լինի Երամ(յ)ցի: Որ մեր պատմագիրները Երամ Երամ(յ)ցի անելով իմանում են Պարս (ազգն ու երկիրը) տես Ասողիկ (Ա. Խանդեա. Դ. էջ 25), այլ եւ Երեմիա վարդապետ Բագիրի Հայոց էջ 489. «Եղևմայեցիք եւ պարսիկք անամասն է»: Ուստի Կարս=Պարս. գլխաւոր Պ եւ Կ տառերի շփոթութիւն: Կարծում եմ որ այս քառն շուտանցում իրելու քացատրութիւն Երամայեցի քառնն դրուած լինելով վերջը մի քառ է համարուել. այնուհետեւ գրչացիր արագգրողին աւելի ծանօթ լինելով ս. Գրքի Ե դովմայեցի անունը, շփոթել է:

Էջ 28. Շինեալ քաղաք... զոր անուանեալ շահասան(ին) Ոկնոյ կոչեմ... ընդգծուած քառն պէտք է լինի Հ + Ուովմայ: Հ գլխաւորի քառն ընկնելը կարելի է միայն այնու քացատրել, որ գրչագրեւում շատ անգամ յատուկ անունաց եւ վերնագրութեանց առաջին տառերը արագգրելու ծանախակ բողբոլում են որ յետոյ գուցէ անոր կամ ծաղկազարդ տառ գրեն, որ յետոյ զանազան պատճառներով լիարժեքութեամբ ապագայ տեղ գրչագրեւում այնպէս էլ արագգրում են. այնուհետեւ երկարագիր Ռովմայ դիտարեւմբ կրտսեմ Ոկնոյ մանաւանդ տեղ, վերջին տեղ եւ կամ արագ արագգրողի մեղմում:



ՅՈՒՆԻՍԿՈՒՄ. ԱՐԲԵՐԵՏԻ 1899 թ. ՅՈՒՆԻՍ.

ՊԱՏՄԱԿԱՆ—ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

I.

ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆԻԶ

(Ը. դար).

(Նախնականութիւն) *

Ամբողջ Դ. պրակը աւելորդ աշխատութիւն կլինէր մեզ համար, եթէ առանց այս ու այն կողմն ընկնելու հնարաւորութիւն ունենայինք որոշելու հեղինակի անձը: Մենք ստիպուած էինք նիւթեր հաւաքել յետագայ քննութիւնների համար: Եղևը չէինք կարող տեսլ Դ. պրակի համար. քննադատը անհրաժեշտաբար պարտաւոր է զգում պարզել զրբի միութեան խնդիրը: Խոսքովի անունով մեզ հասած զրբը բազկացած է հինգ միմեանցից անկախ մասերից. առաջին մասի վերնագրի մէջ հեղինակը յիշուած է Խոսքովիկ Թարգմանիչ անունով. Դ. և Ե. զլուխներում հեղինակն իրեն Խոսքով է անուանում վերջին անունը կրկնուած է և Ե. զլխի վերնագրի մէջ, ** իսկ Բ. և Դ. զլուխներում հեղինակի մասին ոչ մի յիշատակութիւն չկայ: Խոսքովիկ Թարգմանիչը նոյն է Դ. և Ե. զլուխների հեղինակ Խոսքովի հետ, և եթէ նոյնն է, նորա զործերն են արդեօք Բ. և Դ. զլուխները: Ահա հարցեր, որոնց պարտաւոր ենք պատասխանել այս պրակի մէջ. Հասկանալի է, որ ի զուր կլինէին մեր ջանքերը ամբողջ զործի հեղինակն ու ժամանակը որոշելու, եթէ նախապէս չհաստատանք, թէ հինգ զլուխն էլ մի հեղինակի զործ է. թերի կլի-

* Տես Արարես 1899 թ. յունիս եր. 260:

** Արարես 1899 թ. յունիս.

ներ մեր գործը և այն ժամանակի եթէ այս կամ այն զլխի ծագման ժամանակը որոշելով՝ եզրակացութիւն անելիք և միւս զլուխների համար ժամանակի որոշման խնդրում այս ընթացքն են բռնել մեր նախորդները, մեզ մնում է խնդիրը աւելի հաստատուն հողի վերայ գնել և որոշել թէ հինգ զլուխն էլ մի հեղինակի գործ է, թէ ոչ: Եթէ նոյն հեղինակին է, ուրեմն մի կամ երկու մասի ծագման որոշումը բաւական կլինի և միւսների ժամանակը պարզելու:

Մեր հաւաքած փաստերը այս խնդրի լուծման համար տարաբաղդարար շատ չեն, բայց մեր ունեցածն էլ կարծում ենք միանգամայն բաւական է հաստատուն եզրակացութիւն անելու Սոսրովկի գործի միութեան մասին: Ա. Մենք տեսանք Գ. պրակի մէջ, որ Յովհաննէս Երզնկայեցին՝ Անանիայի Սոսրովկի և Յովհաննէս քահանայի խմբագրողը հինգ զլուխներն էլ մի անձի, Սոսրովկի թարգմանչի գործ է համարում իւր ձեռքով գրած նախադրութեան մէջ: * Մեզ համար մի և նոյն է, յիշեալ Յովհաննէս Երզնկայեցին յայտնի մատենադիր Ծործորեցին է, թէ ոչ: Բաւական է յիշել, որ մօտաւորապէս ԺԳ. դարից ներկայ խմբագրութեամբ ձեռագիր ունիք: Բ. Սոսրովկի միութեան համար շատ աւելի կարեւոր փաստ է այն հանգամանքը, որ Յովհաննէս քահանայի երկի ԺԶ. զլուխը — նորին յայտարարութիւն զանազան հերժուածոց յայլ և յայլ ժամանակս յարանց ըղջախոցաց վերնագրով ամբողջապէս համառօտութիւն կամ բանաբաղութիւն է Սոսրովկի

Ա. Դ. և Ե. զլուխներից: Աւելորդ ենք համարում երկար ու բարակ համեմատութիւններ անել Յովհաննէս քահանայի բանաբաղութիւնը հաստատելու համար, այն ժամանակ հարկաւոր կլինէր արտագրել ամբողջապէս այդ զլուխն և նորա գէմը գնել Սոսրովկի երկի համապատասխան մասերը: Բաւական ենք համարում մի քանի հատուած միայն մէջ բերել: Յովհաննէս քահանան ԺԶ. զլխի մէջ մաքառում է Սեբեթանների և Յուլիանիների գէմ ուստի և մեծ մասով խոսրովկի երկի Դ. և Ե. զլուխներն է արտագրում: միայն անցողակի կերպով խօսում է բնութեան խնդրի մասին, այդտեղ էլ յարմար տեղում օգտուելով Ա. զլխից: Սոսրովկի գրքի մասերի դասաւորութեան համեմատ իւրաքանչիւր զլխից մի հատուած բերենք մեր ասածները ընթերցողներին շօշափելի անելու համար:

Սոսրովկի Ա. զլ. եր. 245-246, Յովհ. քահ. եր. 533-534:

Եթէ որ զմի բնութիւն Եթէ որ զմի ըստ բնութեան այլ ոչ ըստ բնութեան այլ ոչ ըստ միաւորութեան աւ միաւորութեան ասացէ սացէ որ ի Քրիստոս ի Քրիստոս կամ Արիօսի եղիցի գաւանակից, որ զբանն Աստուած աւ րարած ըստ մարմնոյ աւ մի բանին, հարկաւորեցաւ ասել զբանն և զմարմին բանին, հարկաւորեցաւ ասել մի բնութիւն զմարդկայինս, զկապակցութիւն հոգւոյ և մարմնոյ յօրինակ առնելով և որ ի հոգւոյ և մարմնոյ կամ և տքենիտ և մանիքեցի, որ անստացական ասելով զբանն և զմարմին բանին, յանգեցնեցաւ ասել մի բնութիւն բանին և մարմնոյն:

Դարձեալ վերկուս բնութիւնն և թէ ոչ ըստ բնութեան և յորոց եղեն նշանակելով՝ և միայն մտածութեամբ, այլ ի մանիքեցիք: Դարձեալ երկուս աւելով և բարձանարար ստանի ասացեալ ընդ Պօղոսի սամոսացոյ և ընդ Դիոդորի Տարսոնացոյ նութեանցն ուստի եղեն

* Նուստ և տկարագի Յովհաննէս Երզնկայեցի սպասաւոր բանի և իմաստից գրոց սրբոց ծարախ. յոյով ժամանակօք և աշխատութեամբ բազմաւ ստացա զերեք գիրքս, որ են հիմունք հաւատոյ ուղղափառութեան և թէ զմին ի սոցանէ գտանէ որ բարբախտութիւն մեծ և փարթամութիւն անկէիտ համարիմ նմա, մանաւանդ զճշակ քաղցրութեանն գիտողի, զոր և զտի ևս յայլ և յայլ տեղի և ժամանակ և ստացա զերիս գիրսն և ի նոցունց դարձեալ ետու գրել և առ միմեանս եղի և արարի մի գիրք: Առաջին զԱնանիայի զհայոց վարդապետի, երկրորդ զՍոսրովկայ թարգմանչի և զհօր գիտականի, երրորդ զսարկաւազ վարդապետին և զմեծ իմաստասիրի զՎաղբատեցւոյ, № 518, եր. 1:

մինն Բրիտոսի և սա զինի յարութեանն զայսոսիկ ի բաց բառնալով ի մարմնոյն Բրիտոսի զանուանս զնոյն խորհին վասն Բրիտոսի ոմն յառաջ և ոմն յետոյ՝ համաձայն լինելով իրերաց նոյնպէս երկոքին առաջօր գտանին ասացեալ զմարմինն Բրիտոսի և կամ յերկնից բերեալ։ Եւ զարձեալ թէ. որպէս առան զինի յարութեանն լինել բանին Աստուծոյ և մարմնոյն իւրոյ միաւորութիւն և ի միաւորութեանէ անտի մի ասել ի վերայ Բրիտոսի բնութիւնն ոչ կարէ հեռանալ ի նիստորի մոլորութենէն զի և զնոյնդ ասէր։

Մի հատուած էլ յՍոսրովկի Ե. զլիւից համեմատեմք։

Խոսր. Ե. գլ. եր. 318-319.

Այսպէս երկոքին սոքա երկուք այսոքիւք բանիւք մարտուցեալք ընդ միմեանս ոչ մերձենային (յ) աստուածային գիրս իբրև յազրիւրս լուսոյ, որ լուսաւորելն կարէ զմտացն աչս առնուլ ի նոցանէ այր ընդերի իւրոյ զնպատակ յազթութեանս այլ իւրաքանչիւր որ յանձնահաճութեամբ համարածեալք կառս զոր կործանի ի միմեանց սաստեղ սաստեղին անձանց իւրեանց և ճամարութեանն և սասանեալք եղին յուղղափառութենէ առաքելական հաւատոյն և միանգամայն ասել, երկոքին ի ձեռն իրերաց զանկանգնելին զլսրեցան զլորումն։

Եւ կացին մնացին յայս զբի Մ. ամ սակաւ կամ

ուրանայր զմարդկային անուանս ի վերայ նորա վասն որոյ խոսեալ առաջօր ասող զմարդեղութիւնն Տեառն և ինքն յետ յարութեանն զնոյն ասէ։ Սակայն կարծիք երկոցունց չեն ի միմեանց բաժանեալ, զի զինի յարութեանն զայն իմանալ և ասել, զայլ ինչ ոչ քան եթէ առանց ճըշմարտութեան զմարդանալն նշանակէ կամ երկնային ոմն ունել մարմին։ Արդ եթէ յետ յարութեան եղև միաւորութիւն բանին ընդ մարդոյն որպէս ասեն, զիւրոյ ոչ զնեստորին խորհին։

Յովն. Բան. եր. 438-539.

Այսպէս երկոքին սոքա այսպիսի բանիւք մարտուցեալ ընդ միմեանս ոչ և ճամարտութեան հաւանեցան. վասն զի ոչ կամեցան յառել ի գիրս աստուածաինս առնուլ լոյս մտաց աչսն զի մի ընդ խաւար գնայցեն։ Այլ իւրաքանչիւր որ ի նոցանէ յանձնահաճութեան ամբարձեալ կառս գտան անգեալք ի ճամարիտ խոստովանութենէ ուղղափառ հաւատոյ։

Եւ զնահապետական կամեցեալք առնուլ պա-

աւելի ի նմին կործանման եղեալք անբժշկելիք և անողջանալիք, եւ նրստեալ իւրաքանչիւր որ քան ձինն՝ ազգածինք և ցեղապետք՝ յիւրեանց անուանեն Բրիտոսի փոխեցին անուանելով այսու անուանակոչութեամբ յուրմս անցունցին ժամանակի, զբէթէ սուղ ինչ նուազ քան զերկերիւր ամ։

Եւ որ Գծրնայ քաղաքին եպիսկոպոսն էր, այր հանճարեղ և կուրաբան, որ ի կենդանութեան իւրում զբաղուած հերետիկոսաց էինց զբերանս և կապեաց զհայհոյիչ լեզուս և զինի տակարան անձին բազում զբեան իմաստութեամբ զարդարեալս և ծաղկաւրս։ Այլ և սա այն է, զոր Յակոր կոչեն, որ ոչ եթէ ի պէտս եկեղեցւոյ եղև ձեռնադրեալ եպիսկոպոս, այլ միարանեալ ընդ Սեբեբայ Անտիոքացոյ՝ ձեռնադրեցաւ եպիսկոպոս։ Այլ և սա այն է, կոպոս ի նմանէ, ոչ ի փրկութիւն ժողովրդոց, եթէ ի պէտս եկեղեցւոյ եղև ձեռնադրեալ եպիսկոպոս, այլ միարանեալ ընդ Սեբեբայ ձեռնադրեցաւ ի նմանէ։

Այսքան օրինակներէ յետոյ յոյս ունինք, որ մեր ընթերցողներ ի համար այլ ևս կոսկածի տեղիք չէ մնացել, թէ Յովհաննէս քահանան իւր զրբի ԺԶ. գլուխը զրիւս օգտուել է յՍոսրովկի երկերից։ Այս իրողութիւնը միեւնոյն ժամանակ մեզ համար ապացոյց է, թէ Յովհաննէս քահանան իւր աղբիւրները աչքի առաջ է ունեցել իբրև մի ժողովածու զիրք և ոչ այստեղ այնտեղ ցրուած։ Հակառակը մտածել, այսինքն թէ Յովհաննէս քահանան այլ և այլ մատեաններէ է քաղել ԺԶ. գլխի բովանդակութիւնը, շատ զարմանալի զուգադիպութիւն կը լինէր, որ նորա բոլոր աղբիւրներն այսօր մի զիրք են կաղմում յՍոսրովկի անունով։ Յովհաննէս Եղեկայ եպիսկոպոսի նախադրութեան խօսքերն էլ հաստատում են, որ նա երեք հեղինակի Անանիայի, յՍոսրովկի և Յովհաննէս քահանայի

տիւ և անուն, յիւրեանց զհաւանելոցն փոխադրեցին անուն կոչման։ Յուսելով իւրաքանչիւր որ քան ձինն՝ ազգածինք և ցեղապետք՝ յիւրեանց անուանեն Բրիտոսի փոխեցին անուանելով այսու անուանակոչութեամբ յուրմս անցունցին ժամանակի, զբէթէ սուղ ինչ նուազ քան զերկերիւր ամ։

Բայց զԵակորին անուանեալ զի եղին սոցա մի կարծեք զպատուականին և սրբոյ իմաստնոյն Յակովբա հայրապետին Գծրնայ, որպէս ինքեանք այժմ համարուեն, այլ է այսպէս։ Եւ որ ոմն, զոր արդարայն անուանեն, միարանեալ ընդ Սեբեբայ Անտիոքացոյ՝ ձեռնադրեցաւ եպիսկոպոս։ Այլ և սա այն է, կոպոս ի նմանէ, ոչ ի փրկութիւն ժողովրդոց, եթէ ի պէտս եկեղեցւոյ եղև ձեռնադրեալ եպիսկոպոս, այլ միարանեալ ընդ Սեբեբայ ձեռնադրեցաւ ի նմանէ։

գրքերն է միացրել և մի հատոր կազմել և ոչ նոցա զանազան մասերը *:

Մեզ շփոթել կարող էր միայն մի համադամանք: Ժ.Ձ. գլխի վերնագրին նայելով հեղինակը պէտք է իւր նիւթը քաղած լինէր այլ և այլ ժամանակի մատենագիրներից: Բայց բովանդակութիւնը ցոյց է տալիս, թէ «յայտարարութիւն զանազան հերձուածոց» խօսքերի տակ պէտք է հասկանալ Սեբերեաններին (Թէոփոսոս): և Յուլիանիաներին: որոնց մասին քաղում է ամբողջապէս Խոսրովից: Մանրամասն համեմատութիւնից յետոյ ամենայն հաստատութեամբ ասել կարող ենք, որ Յովհաննէս քահանայն Ժ.Ձ. գլխի համար Խոսրովի յիշեալ գլխիներից զատ ոչ մի ազդեցութիւն չէ ունեցել ձեռքի տակ: Ժ.Ձ. գլխի բովանդակութիւնը տող առ տող կարելի է զբաղեցնել Խոսրովի երկի մէջ: Ուրեմն և առանձին նշանակութիւն չունի վերնագրի երկրորդ մասը «յարանց բղջախոհաց» որից կարելի էր եզրակացնել, թէ Խոսրովից զատ հեղինակը ուրիշ աղբիւրներ ևս ձեռքի տակ է ունեցել: Եթէ անիմաստ և առանց ուշադրութեան դրուած խօսքեր չեն, որի օրինակներն ունինք Ժ.Ձ. գլխի մէջ, կարելի է հեռեկալ կերպով բացատրել «յարանց բղջախոհաց» բառերը: Հաւանօրէն հեղինակը Խոսրովի թարգմանիչ և Խոսրով անունները տարբեր անձնաւորութիւնների է համարել, թէ և բոլոր աղբիւրները մի հատորի մէջ ամփոփուած, ուստի և «յարանց բղջախոհաց» նշանակել վերնագրում: Եւ մանայն գէպս մեր եզրակացութիւնների գէմ վերնագրի խօսքերը որ և է նշանակութիւն չունին:

Դ. Խոսրովի գրքի միութեան համար վերջիշեալ արտաքին վկայութիւններից զատ դրական ցուցումներ կան նոյն իսկ իւր գրքի մէջ: Ե. գլխի կամ «առ Տէր Սարգիս եպիսկոպոս Դերագիրորայ» ուղղած թղթի մէջ հեղինակը երկու տեղ յիշում է Աթանաս պատրիարքին գրած թղթի մասին **: Դորանով նախ հաստատուն վկայութիւն ունինք, որ Դ. և Ե. գլուխները նոյն հեղինակի գոր-

ծեր են և երկրորդ, թէ Դ. գլուխը ժամանակով աւելի առաջ է գրուած, քան Ե.—ը: Տարբարողտարար այսպիսի հաստատուն հեղինակի խօսքերի վերայ հիմնուած աղտոյցներ չունինք միւս մասերի համար: Բայց նիւթերի բացատրութեան եղանակների և զարձուածների համեմատութիւնը ցոյց է տալիս, որ Ա. Բ. և Գ. գլուխներն էլ Դ. և Ե. գլուխների հեղինակինն են: Մեզ դրադեցնող բոլոր մասերը աչքի առաջ ունենալով տեսնում ենք, որ հեղինակը մաքառում է երեք հակառակ ուղղութեան գէմ՝ քաղկեդոնականութեան (Ա. ԳԼ.), (իսկ թէ մի քանի քաղկեդոնականները, յետոյ կտեսնենք), Եւրոպականների (Բ. Գ. Ե. մասամբ և Ա. ու Գ. ԳԼ.) և Սեբերեանց (Դ. մասամբ Ե. ու Ա. ԳԼ.) գէմ: Առաջին գլխի մի հատուածից էլ № 518, եր. 245-246 երևում է, որ նա Բայի յիշեալներից ուրիշ հակառակորդներ չունի: Ամենից խիստ մաքառում է հեղինակը Եւրոպականների գէմ և ինչպէս տեսնեք քիչ առաջ փակագծի մէջ առնուած նկատողութիւնից, բոլոր հինգ մասերում մեծ կամ փոքր չափերով: Այս կրկնութիւնները ցոյց են տալիս, որ հեղինակը ստիպուած էր մի քանի անգամ գրիչ առնել հակառակորդների մանաւանդ Եւրոպականների գէմ, որոնց գէմ ինչպէս ուրիշ աղբիւրներից էլ կատու գնեք խիստ մաքառում էր սկսուած հայաստանում: Դորանով էլ պէտք է բացատրել օրինակ այն մեծ առնչութիւնը, որ նկատելի է Բ. և Գ. գլուխների և Ե. մէջ: Առաջին երկու փոքր գլուխների բովանդակութիւնը երբեմն մինչև իսկ խօսքերի և բացատրութիւնների մեծ նմանութեամբ, զանում ենք Ե. գլխի մէջ: Միայն այստեղ հեղինակը պատմական տեղեկութիւններ է տալիս նաև Եւրոպականների ինչպէս և Սեբերեանց ծագման մասին և աչքի առաջ միութեան նպատակով մեզ յայտնի ժողովը, այն ինչ Բ. և Գ. գլուխներում վերլուծում է հակառակորդների տեսական վարդապետութեան մի քանի մասերը և ցոյց տալիս նոցա սխալները: Մենք չգտնում ենք, որ ընդհանրապէս ընթերցողներին անմատչելի լինելու պատճառով, հարաւորութիւն չունինք ըստ ամենայնի թանձրաց-

* Տես. եր. 316 ծանօթ.

** Տես. Արարես, մայիս եր. 216 ծանօթ.

նեղու մեր տեսութիւնը Բաւականանում ենք մի երկու փոքրիկ համեմատութիւններով որոնք ցոյց են տալիս, թէ ինչպէս հեղինակը զանազան գլուխներում միմիանցից անկախ զրուած, զբաղուում է նոյն խնդիրներով:

№ 518, Գ. զլ. եր. 276.

Ե. զլ. եր. 326.

Հակառակորդները պընդում են «թէ մի և նոյն բնութիւն նախատեսողին յերկուս բնութիւնս զանազանեալ գառաւ: այլ բնութիւն ունեւ յամառաջ քան զյանցանսն և յայլ փոխել յետ յանցանքսն ասելով՝ յառաջ քան զյանցանսն անմահ էր և անապական և ամենայն կրից և կրեաց մարդկայնոց անբնդունակ, զի այն ամենեքին յետ մեղացն ի շար յաւելեալ եղև»:

Եւ որ դէ յարացոյց մարմնոյն Քրիստոսի զառաջին մարդոյն մարմին, նախ քան զանցանելն, ասելով, առաջին մարդն անբնդունակ էր կրից մարդկայնոց, մարմնականաց և հոգեկանաց...

Խոսքովիկ թէ Գ. և թէ Ե. գլուխների մէջ ապացուցանում է, որ Ադամ և Բրիտտոս մարդու հոգւոյ և մարմնոյ յատկութիւններն ունեցել են, ուրեմն և սխալ է Տիրոջ մարմինը անշարժարելի և անմահ տակ ըստ բնութեան: Գ. զլխի մէջ հեղինակը իւր ապացուցութեան կեդրոնը նախատեսողի, իսկ Ե. զլխի մէջ Բրիտտոսի անձնաւորութիւնն է ընտրում: առաջին համար ցոյց տալով, որ նա մեղանշականութիւնից առաջ ևս նոյն յատկութիւններն ունէր, ինչպէս և յետոյ, իսկ մեղքը անձնիշխան կամքի հետեանք էր, իսկ երկրորդի համար, թէ նորա մարմինն ևս մարդկային յատկութիւններ ունէր բացի մեղքից: Բնագիրների վերայ շատ հեշտ է նկատել, որ երկու տեղն էլ նոյն հեղինակն է խօսում: Խուսափելով նման բացատրութիւնների և օրինակների աչքի ընկնող կրկնութիւնից:

Բ. զլխի մէջ հեղինակը մաքառում է ըստնի եւ մարմնոյ համագոյութիւն վարդապետողների զէմ: * որ Ե. զլխի մէջ «որ ասեն զըսմն

մարմինն եւ մարմինն քան եր. 333. խօսքերով է արտայայտուած:

Բ. զլխի մէջ եր. 272. հակառակորդներն ասում են «թէ մինչ համագոյ և համարուն ոչ ասի տէրունական մարմինն և ոչ աստուածութեանն և ոչ դարձեալ իսկս (?) բնութեան և անեղութեան բանին գտանի եղեալ հաղորդ, զիմով յարմարեացի խոստովանել մի բնութիւն բանին մարմնացելոյ: Ուրիշ խօսքով, հակառակորդները պնդում են. եթէ մի բնութիւն ենք ասում, պէտք է մարմինն էլ անեղ և համագոյ լինի բանին:

Նոյնը տեսնում ենք և Ե. զլխի մէջ եր. 334. «Որք ասեն, թէ միանալով մարմինն ի բանն, անեղ եղև և ինքն, եղև այնուհետև և որ ինչ բանին, նոյն և մարմնոյն» և եր. 336. «որք ասեն, թէ յերկուց մին ասել զԲրիտտոս ամբարշտութիւն է, այլ պարտ է ասել ի վերայ նորա մի բնութիւն: Բացատրութիւնից երևում է, որ հակառակորդները մարմինը բանին համագոյ են համարում մի բնութիւն ասելու համար:

Ինչպէս յիշեցինք նման յարարերութիւն ունին Ա. զլխի որոշ մասերը Գ. և Ե. գլուխների հետ: Մենք կարող էինք Ա. զլխի այն մասերից, որոնք Յուլիանիտների կամ Սեւերեանց գէմ են ուղղուած, Գ. և Ե. գլուխների բացատրութիւնների և դարձուածների նմանութիւնների բերել, բայց թողնում ենք՝ ընթերցողներին ձանձրոյթ չպատճառելու համար: մանաւանդ որ Ա. զլխի միութիւնը Գ. և Ե. գլուխների հետ Յովհաննէս քահանայի երկի առնչութեամբ արդէն հաստատուած ենք համարում:

(Կր շարունակով)

Գ. Վ. Յովսէփեան.

